Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
մարտի 3-ի նիստի N 8
արձանագրային որոշման

Թիվ CAM 1004 01A ֆինանսավորման համաձայնագրի

Փոփոխություն 1

Հայաստանի Հանրապետության կառավարության՝
Ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության

(այսուհետ՝ **Ստացող**) մի կողմից

ԵՎ

(1)

Մյուս կողմից՝

Զարգացման ֆրանսիական գործակալության, Ֆրանսիայի Հանրապետության օրենքներով գործող ֆրանսիական հասարակական կազմակերպության, որի գրասենյակը գտնվում է 5, Rue Roland Barthes, 75598 Paris Cedex 12, France, հասցեում, գրանցված Փարիզի առևտրի և ընկերությունների ռեգիստրում 775 665 599 համարի ներքո, ի դեմս Ժան-Կլոդ Պիրեսի, որպես Զարգացման ֆրանսիական գործակալության Ասիայի վարչության փոխտնօրեն, ով պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու սույն համաձայնագիրը
(Այսուհետ՝ ԶՖԳ)

ՄԻՋԵՎ

(2)

Հաշվի առնելով, որ

(Ա) Հղում ենք կատարում Ֆրանսիայի զարգացման գործակալության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2013թ. հունիսի 12-ին ստորագրված թիվ CAM 1004 01 A ֆինանսավորման համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր)՝

(Բ) Սույն Փոփոխության մասին Համաձայնագրի դրույթներին համաձայն՝ ԶՖԳ-ն համաձայնում է երկարաձգել գումարների մասհանման վերջնաժամկետը (i) և (ii) ժամանակահատվածը, որով Համաձայնագիրը պետք է համարվի ուժի մեջ մտած և վավեր:

1. Սահմանումներ

Եթե այլ բան սահմանված չէ սույն Փոփոխության մասին Համաձայնագրով, Համաձայնագրում սահմանված մեծատառերով դրույթներն ունեն Փոփոխության մասին Համաձայնագրի նույն նշանակությունը:

«Փոփոխության մասին Համաձայնագիր» նշանակում է սույն Համաձայնագիրը:

«Ուժի մեջ մտնելու օր» նշանակում է կողմերից յուրաքանչյուրի կողմից Փոփոխության մասին Համաձայնագրի ստորագրման օրը:

2. Փոփոխություն

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից փոփոխված է հետևյալ կերպ՝

2.1 Համաձայնագրի Հոդված 3.4 «Մասհանման վերջնաժամկետը» փոփոխվում է հետևյալ կերպ՝

«Գումարների մասհանման վերջնաժամկետը պետք է լինի 2018թ. դեկտեմբերի 31-ը: Նշված վերջնաժամկետից հետո այլևս հասանելի գումարներ չեն լինի:

ՀՖԳ-ն պետք է ստանա վերջին Մասհանման հայտը նշված վերջնաժամկետից ոչ ուշ, քան 15 օր առաջ: Մասհանման հայտերը պետք է ուղարկվեն ՀՖԳ-ին մասհանման վերջնաժամկետից առաջ մեկ ամսվա ընթացքում նախապես՝ պատվիրված առաքանու միջոցով՝ հաստատելով դրա ստացումը:

Վերջնաժամկետին չմասհանված Դրամաշնորհի ցանկացած մասնաբաժին ինքնաբերաբար չեղարկվում է:

2.2 Համաձայնագրի Հոդված 11.1 «Ուժի մեջ մտնելու ժամկետի դադարեցումը» փոփոխվում է հետևյալ կերպ՝

«Համաձայնագիրը պետք է ուժի մեջ մտնի ստորագրման օրը և վավեր լինի մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:»

2.3 Համաձայնագրի Աղյուսակ Ի-ի Ա սահմանումների «Տեխնիկական ավարտման ժամկետը» փոփոխել հետևյալ կերպ՝

«Նշանակում է Ծրագրի տեխնիկական ավարտի նախատեսված ժամկետ, որն է՝ 2019թ. դեկտեմբերի 31-ը:

3. Գրանցման վճարներ և դրոշմատուրքեր

Ստացողը պետք է իր վրա ստանձնի Փոփոխության մասին Համաձայնագրի հետ կապված ցանկացած դրոշմատուրքի և գրանցման տուրքի վճարումները, եթե այդպիսիք առկա են:

4. Այլ դրույթներ

Համաձայնագրի բոլոր այլ դրույթները պետք է մնան անփոփոխ, ուժի մեջ մտած և վավեր այնքան, քանի դեռ չեն հակասում սույն Փոփոխության մասին Համաձայնագրին:

Համաձայնագրի Հոդված 9.7-ի (Փոփոխություն), Հոդված 10-ի (Ծանուցումներ), Հոդված 12-ի (Գերակա օրենք, իրավասություն և ռեզիդենտության ընտրություն) և Հոդված 13-ի (Բնակության վայրը ընտրություն) դրույթները պետք է ներառվեն սույն Փոփոխության մասին Համաձայնագրում, այնպես ինչպես սահմանված է սույն Փոփոխության մասին Համաձայնագրում, և այնպես, ինչպես սույն Փոփոխության մասին Համաձայնագրի հղումներին արված «Սույն Համաձայնագրի» հոդվածներին են վերաբերում:

5. Ստորագրման օրվա դրությամբ նախապայմաններ

Փոփոխության մասին Համաձայնագիրը կողմերի միջև պետք է ստորագրվի ՀՖԳ-ի կողմից իր համար բավարար համարվող հետևյալ փաստաթղթերի նախապես ստացումից հետո:

(i) Ստացողի օրենսդրությանը և իրավասությանը համապատասխան ստացողին տրված լիազորագիրի վավերացված պատճեն, որով անձը կամ անձիք լիազորվում են ստորագրել սույն Փոփոխության մասին Համաձայնագիրը:

(ii) Վերոգրյալ պարբերություն (i)-ում նշված անձի կամ անձանց ստորագրության նմուշի վավերացված պատճենը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է 3 ԲՆՕՐԻՆԱԿՆԵՐԻՑ՝ 2016Թ. .....-ԻՆ, ԵՐԵՎԱՆ

Ստացող՝

Հայաստանի Հանրապետության կառավարություն՝

Ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության

Գագիկ Խաչատրյան_____

ՀՀ ֆինանսների նախարար

Զարգացման Ֆրանսիական Գործակալություն՝

Ժան-Կլոդ Պիրես_____

Ասիայի վարչության փոխտնօրեն